


Մշակութային և Հասարակական
Երկարաթափերը
Յոյս
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



**ՔԱՂՅՐ ԵՐԱԶԱՆՔՆ
ԸՆԴԴԷՄ ԴԱՌՆ
ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՐՅԱԶՐՈՅՅ ԻՐԱՆԱՀԱՅ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ՎԱՅԷ ԱՐՄԷՆԻ ՀԵՏ**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 Աւելի շատ հայեր են լքում Սիրիան Սիրանոյշ Գեւորգեան
- 3 Նոր Զուլայի վանքի գողութեան համար դատուել են երկու հայեր
- 4 Արձագանք՝ Օքաման եւ Genocide տերմինը Քարմեն Ազարեան
- 6 Մեծամորի նոր ատոմակայան թե՛ այլընտրանքային լուծումներ Արիս Ղազինեան
- 15 Արա Օջականի «Հայրենիքը»
- 18 «Փակ շուկա»-ն կորցրել է իր կամարներից մի քանիսը Սիրանոյշ Գեւորգեան
- 19 Շանթ Բաղդամեանը՝ Ֆիզիկայի դոկտոր
- 20 Ֆելիստ Վարինիի հրաշալի ճարտարապետությունը
- 22 Սել խոռոչներ Արման Տէր Ստեփանեան
- 24 Մարզանք Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկչաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ124, Մայիս 13, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8 **Հարցազրոյց իրանահայ բանաստեղծ Վահէ Արմէնի հետ**
- 8 Զաղրք երազանքն ընդդէմ դառն իրականութեան
- 10 Վահէի պատշգամբից
- 11 Բանաստեղծություններ «Երբ անձրեւի, կը գնանք» գրքից
- 12 Գրքերի շապիկները

Պ ա ր ս կ ե ր ե ն ք ա ժ ի ն

2	Այս համարի պարսկերէն էջերում		Մարինա Օսատչեւա		ազատ առեւտրական կենտրոն
3	Հիլարի Զինտոնի այցը Հայաստան	6	Մուլաի «Մասնաւի»-ի պատումների երրորդ հատորը հայերէնով	13	Արտագաղթը՝ Հայաստանի դժարությունների բուն պատճառը Ռեզա Զեյդարի
3	Պատերազմի վտանգը Կովկասում	7	Թեհրանահայ բնակչության պատմության համառօտ ակնարկ		
4	Բահրամ Ամիրահնադեան		Մոհամմադ Ռասուլի		
	Ամենամեծ սփիւռքը. Հայերը Ռուսաստանում	10	Հայաստանում իրանցիների		

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկչաբաթաթերթ</p> <p>Արտօնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hoosy@inbox.com www.hoosy.com</p>
---	---	--	---

ՍԻՐԻԱԿԱՆ ՃՊՆԱԺԱՄ. ԱԻԵԼԻ ՇԱՏ շԱՅԵՐ ԵՆ ԼՔՈՒՄ ԵՐԿԻՐԸ

Սիրիանոյշ Գեւորգեան



Սիրիայում արդէն մէկ տարուց աւելի չղադարող բռնութիւնների հետեւանքով վերջերս աւելի շատ հայ ընտանիքներ են սկսել Յայաստան գալ: Վերջին շաբաթներին միջինարեւելեան այս երկրում անյապաղ խաղաղութիւն հաստատելու առումով որեւէ լուր չկայ, մինչ միջազգային հանրութիւնը քննարկում է Սիրիայի քաղաքներում եւ գիւղերում արիւնալեղութիւնը դադարեցնելու նպատակով ռազմական միջամտութեան տարբերակը:

ՀՀ սփիւռքի նախարարութեան մամուլի եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան պետ Թեւոս Ներսիսեանն «Արմենիա-Նաու»-ին ասում է, որ վերջին մի քանի շաբաթների ընթացքում մօտ հարիւր ընտանիք է եկել Յայաստան: Սակայն նա շեշտում է, որ դրանք այն ընտանիքներն են, որոնք իրենց դիմել են: «Մենք ոչ բոլորի տւեալներն ունենք, շատերը գալիս են եւ բարեկամների մօտ են մնում», - ասում է նա: Սիրիայում անցեալ տարի կառավար-

ական ուժերի եւ ապստամբների միջեւ սկիզբ առած բախումները ոչ մի կերպ չեն դադարում՝ նոյնիսկ միջազգային հանրութեան կրակը դադարեցնելու շարունակական կոչերից յետոյ: Այդ բախումների հետեւանքով, ՄԱԿ-ի տւեալներով, արդէն 13.000-ից աւելի մարդ է զոհուել: Արեւմտեան տէրութիւնները իրավիճակի շիկացման պատասխանատու են համարում Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադին, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը կողմ են Ասադի ռեժիմի վերականգնմանը՝ լաւագոյն դէպքում մեղադրելով թէ՛ իշխանական եւ թէ՛ ընդդիմադիր խմբակցութիւններին՝ Սիրիայում ծաւալած բռնութիւնների համար: Երեքշաբթի (Յունիս 5) պաշտօնական Դամասկոսը յայտարարել է մի քանի պետութիւնների դիւանագետների՝ երկրից վտարելու մասին: Սիրիայի կառավարութեան այդ որոշումը վերաբերում է Սիւացեալ Նահանգներին, Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային եւ Թուրքիային, որոնք վեր-

ջերս որոշում էին ընդունել վտարել իրենց երկրներից Սիրիայի բարձրաստիճան դիւանագետներին, այդ թւում՝ դեսպաններին: Արեւմտեան ութ երկրներ որոշել էին վտարել սիրիացի դիւանագետներին Մայիսի 25-ին Սիրիայի Հուլա բնակավայրում իրականացւած կոտորածի պատճառով, երբ սպանւեց 108 մարդ, այդ թւում՝ 49 երեխայ եւ 34 կին: ՄԱԿ-ը եզրայանգել է, որ սպանութիւնները կատարել են Սիրիայի կառավարական զօրքերը: Սփիւռքի նախարարութեան պաշտօնեան ասում է Սիրիայի հայերից շատերը նախընտրում են գնալ հարեւան Լիբանան, ինչպէս նաեւ եւրոպական երկրներ: «Լիբանանում հայութիւնը կայուն է, ուժեղ է, շատերն ապաստան են գտնում հէնց այնտեղ: Հայաստան համեմատաբար աւելի քիչ են գալիս, գիտենք, որ Հայաստանը ծաղկուն շրջան չի ապրում այժմ, խնդիրներ կան... Բայց այն ընտանիքները, որոնք գումար ունեն, գալիս են, Հայաստանում բնակարան են

Ն. ԶՈՒՂԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՐԱՆՔՈՎ ԴԱՏԱԴԱՐՏԻՒԷԼ ԵՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ

զնուն: Կը մնա՞ն այստեղ, թե՞ ոչ՝ նրանց խնդիրն է: Սիրիայի մեր համայնքն ամենակայուններից, ամենայաջողակներից էր, շատերը բիզնես ունէին, կապեր... Ցաւալի է, որ Սիրիայում կատարուում է այդ ամէնը»,- ասում է Ներսիսեանը: Սփիւռքի նախարարութեան տւեալներով՝ Սիրիայում ապրում է 50 հազարից աւելի հայ: «Մենք այդ թի մէջ չենք ներառում քրդախօս, արաբախօս, կաթոլիկ հայերին, որոնց հետ շփումն ակտիւ չէ: Եթէ նրանց էլ ներառենք, կը ստացւի, որ 100 հազարից աւելի հայեր են ապրում Սիրիայում»,- ասում է Ներսիսեանը: 21-ամեայ Մեղրիկ Զայիթեանը Զայաստան է եկել մօտ երեք ամիս առաջ մօր, քրոջ եւ հօր հետ: Զայիթեանը «Արմենիա-Նաու»-ին պատմում է, որ Զալեպում (հայութիւնն աւելի շատ կենտրոնացած է այս քաղաքում), որտեղ ապրում էին իրենք, այլ վայրերի համեմատութեամբ իրավիճակը մի փոքր աւելի հանդարտ էր: Սակայն նրա խօսքով՝ իրենց Զայաստան գալուց յետոյ տեղի ունեցած պայթիւնի հետեւանքով գոհւել էր իր մօր բարեկամը: «Իսկ նախքան մեր գալը կրկին պայթիւնի հետեւանքով գոհւեց իմ ընկերներից մեկը՝ [Սիրիայի բանակի] հայ զինծառայող Վիգէն Զայրապետեանը»,- պատմում է նա: Զայիթեանի ընտանիքին Զայաստանում օգնում է սիրիահայ մօրեղբայրը, որը վաղուց է տեղափոխուել Զայաստան: Նա այժմ աշխատում է մօրեղբօրը պատկանող մանկական հագուստի խանութում, սակայն կամենում է շարունակել կիսատ թողած ուսումը, բայց ոչ թէ Զայաստանում, այլ արտերկրում: Ուսումն աւարտելուց յետոյ Զայաստան կը վերադառնա՞, թե՞ ոչ՝ Զայիթեանը դժարանում է ասել:

Աղբիւր՝
www.armenianow.com

Քիչ ուշացումով ստորեւ հրատարակում ենք Սպահանի հայոց թեմի կողմից հրատարակւած հաղորդագրութիւնը, որը տեղեկացնում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքից անցեալ տարի կատարւած կողոպտուի մեղադրեալների դատավարութեան մասին: Հաղորդագրութեան համաձայն երկու հայեր դատուել են, որոնցից մէկը դատապարտուել է բանտարկութեան ու տուգանքի, իսկ միւսը՝ միայն տուգանքի: Նրանց անունները եւ ազատագրկման ու տուգանքի ստոյգ չափը եւս չի հրապարակուել:

ՄՂԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԱՐՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սիրելի Զայրեանակիցներ՝

Շուրջ եօթը ամիս առաջ՝ 2011 թւականի Դեկտեմբերի 11-ի թւակիր հաղորդագրութեամբ, մեր Թեմի ժողովրդին իրազեկել էինք Ս. Ամենափրկիչ Վանքի թանգարանից գրչագիր մատեանների 5 պատառիկ էջերի սրբապատկերների եւ երկու նկարչութիւնների գողութեան եւ դրանց վաճառքի մէջ ամբաստանող անհատների ձերբակալման մասին, որոնք նախնական հետաքննութեան աւարտից յետոյ մինչեւ իրենց դատավարութիւնն ու դատավճռի հրապարակումը, ազատ էին արձակուել իրենց կողմից իսկ ներկայացուած երաշխիքների դիմաց:

Այժմ տեղեկացնում ենք հանրութեանը, որ թւականիս Մայիսի 6-ին տեղի ունեցաւ երկու հայ անհատների՝ սոյն թղթածրարի առաջին եւ երկրորդ կարգի ամբաստանեալների դատավարութիւնը Սպահանի դատարանի պատկան ատեանում, որին իբրեւ հայցւոր ներկայ են եղել Սպահանի Զայոց Թեմի Թեմական Խորհրդի ներկայացուցիչը եւ լիազօրւած փաստաբանը եւ դատարանին են յանձնել ամբաստանեալների դէմ Թեմական Խորհրդի գանգատի եւ դրան հիմնաւորող փաստարկների բնութագիրը:

Ըստ դատարանի մի քանի օր առաջ հրապարակած դատավճռի, առաջին կարգի ամբաստանեալը Սպահանի Ս. Ամենափրկիչ Վանքից գողացել է՝ երկու նկարչութիւններ եւ մագաղաթեայ ու թղթեայ գրչագիր մատեանների նկարագարող հինգ էջեր եւ դրանք վաճառելու նպատակով յանձնել է երկրորդ կարգի ամբաստանեալին:


Դատական ատեանը քննելով դատական թղթածրարը, կատարւած հետաքննութիւնները, ամբաստանեալների արտայայտութիւնները՝ հետաքննութեան նախնական փուլերում, կարգապահական մարմինների զեկոյցներն ու առկայ փաստերը, ամբաստանեալների յանցանքը ապացուցուած է յայտարարել՝ նրանից առաջին համար սահմանելով բանտարկութեան եւ դրամական տուգանքի, իսկ երկրորդի համար դրամական տուգանքի պատիժները:

Նկատի ունենալով, որ սոյն դատավճիռները ենթակայ են բողոքարկման, առայժմ այլ մանրամասնութիւններ չենք կարող հրապարակել: Աւելացնենք, որ Խորհուրդս իր փաստաբանի միջոցով պաշտօնական հայց է ներկայացրել նաեւ երրորդ պարսիկ անհատի կապակցութեամբ դատախազութեան կողմից հետաքննութիւնը կասեցնելու հանգամանքները պարզելու ուղղութեամբ:

Սպահանի Զայոց Թեմի Թեմական Խորհուրդ
26 Մայիս 2012

ԱՌԱԿՍ ՉԻՆՉ ԿԸ ՅՈՒՅԱՆԷ ԿԱՍ ՕՔԱՄԱՆ ՈՒ «GENOCIDE» ՏԵՐՄԻՆԸ

Քարտեզ Ազարեան



«Յոյս»-ի 123-րդ համարի առաջին էջերում լոյս տեսած «Բազում են կոչեցեցաք, սակայն են ընտրեցաք» վերնագրի տակ պրն. Ռուբեն Սաֆարեանի ստորագրությամբ յոթևածը, որն իր հերթին անդրադարձ է նոյն թերթի համար 121-ում խմբագիր Ռոբերթ Սաֆարեանի պարսկերեն բաժնունդ տպագրած «Հայոց կոտորածը եւ միջազգային քաղաքական ու մշակութային շուկան» յոթևածին, մտածելու լուրջ առիթ է տալիս:

Նախ՝ հարկ է նշել, որ «Բազում են կոչեցեցաք եւ սակայն են ընտրեցաք» (Բազում են կանչվածները եւ քիչ են ընտրվածները) վերնագիրը Աստուածաշնչեան «Վասն վարձկանության մշակացն» առակի վերջին, եզրակապիչ նախադասության մի մասն է, ուր ասուում է՝ «Այսպես եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք՝ յետինք, զի բազում են կոչեցեցաք եւ սակայն են ընտրեցաք»։ (Այսպես կը լինեն վերջինները առաջիններ եւ առաջինները՝ վերջիններ, որովհետեւ

տեւ բազում են կանչվածները եւ սակայն են ընտրվածները:) Թէ նշված առակից վերցրած այս նախադասութիւնը ի՞նչ կապ ունի յօդածի բովանդակութեանը, այնքան էլ մասստիս համար պարզ չէ, ենթադրում են, որ ուզում է ասել՝ խմբագիր կոչւողները շատ են, բայց «ընտրեցաք» քիչ են, սա լոյս ենթադրութիւն է: Այս դէպքում հեղինակը, զոնէ պիտի պարզ ու յստակ արտայայտէր իր պատկերացումը կան ակնկալիքը՝ «Ընտրեցաք» խմբագրից, եթէ ոչ՝ այս յօդածի ընթերցողը կարող է մտածել, որ յօդածագիրը հարցակցանի տակ է տանում ոչ միայն Ռոբերթ Սաֆարեանի տւեալ հայեացքները կան յօդածի բովանդակութիւնը, այլ՝ ողջ անձը, մի բան, որը կարող է արժեզրկել եւ անձնական թշնամական գունաւորում տալ ցանկացած ազնիւ շարժառիթով գրած քննադատութեանը: Չմոռանանք անդրադառնալ նաեւ յօդածի վերջաբանին՝ «Յիշատակը բիրաւոր նահատակաց օրհնեալ եղիցի: Ամէն:» Ասես թէ ողջ շարադրանքը մի աղօթք է, սրբազան խօսք, որի հաւաստիութեանը կասկածելը սրբապղծութիւն կը լինի: Սրանով հեղինակը, մի տեսակ, ընթերցողին ի սկզբանէ զրկում է ազատ ու անկաշկանդ մտածելու եւ առկայ տեսակետերի մասին իր անաչառ եզրակացութիւնը անելու իրաւունքից, մի բան, որն ըստ իս՝ հեղինակի մեծամտութեան ու յաւակնոտութեան ապացոյցն է:

Ամէն դէպքում, նման կանխակալ դիրքաւորումից խուսափելով, փորձենք երկու յօդածներից վեր հանել բուն հարցը: Ռուբեն Սաֆարեանը հենց սկզբից եւ առաջին

պարբերութեամբ դատաւիտտում է Ռոբերթ Սաֆարեանին (այսուհետ՝ Ռ.Ս.-Ք.Ա.), ասելով թէ՝ «Ռ.Ս.-ը, ըստ երեւոյթին **դժգոհ է թէ ինչո՞ւ են հայերը ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայից պահանջում իր Ապրիլ 24-եան ելոյթում անպայման օգտագործի «Genocide» տերմինը, ինչը մտածելու առիթ է տալիս յօդածի իւրաքանչիւր հայ ընթերցողին՝ մանաւանդ երբ ինքը՝ հեղինակը (Ռ.Ս.-ն-Ք.Ա.), թէ իր յօդածի խորագրում եւ թէ հետագայ տողերում խուսափում է օգտագործել Հայոց Ցեղասպանութիւն կան «Genocide» տերմինը, եւ միայն բաւարարում է «հայերի ջարդ»-ը յիշատակութեամբ»: Չզիտես ինչու, թիւրիմացաբար թէ դիտաւորեալ, յօդածագիրը աղաւաղում է միտքը, այն որ Ռ.Ս.-ը պարսկերէնով գրած խնդրոյ առարկայ յօդածում դժգոհութիւն է յայտնել այն փաստից, որ Բարաք Օբաման նախքան ընտրութիւնները խոստանում է Հայոց Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչել, իսկ քէներն ստանալուց յետոյ, ըստ հենց Ռուբեն Սաֆարեանի՝ «խոստումնադրուժ» է լինում... Ակնյայտ է, որ Ռ.Ս.-ը դժգոհում է հայկական հարցի նման չարաչառումներից, եւ մեր ժողովրդի խաբաւծութիւնից, ոչ թէ նրա արդար պահանջից՝ ցեղասպանութիւնը դատապարտելու ուղղութեամբ: Աղաւաղման նոյնպիսի միտում է նկատուում նաեւ այն «դժգոհութեան» մէջ, որը Ռ.Ս.-ը յայտնել է միջազգային լրատամիջոցների կողմից այս հարցը շահարկելու մասին: Եթէ նա բողոքում է այն փաստի դէմ, որ պարսկալեզու արբանեակային ցանցը Հայոց կոտորածին նւիրած իր լուրջ ու վաւե-**

րագրական տեսանիւթի սրտաճն-
լիկ պատկերները ընդմիջում է շո-
կոլադի ու շամպուի գովազդով ու
թեթևալիկ ծիծաղաշարժ պատ-
կերներով, արդեօք դա այն իմաս-
տով է, թէ նա դժգոհ է բուն հաղոր-
դումի՞ց թէ՞ եթերման ձեւից:

Շարունակութեան մէջ հեղի-
նակը Ռ.Ս.-ի մէջ իր համար, ասես,
հակաճառող գտած, ակնարկ է նե-
տում «Յեղասպանութեան» տեր-
մինի գործածութեան պատմակա-
նին եւ հաստատում իբր իր սե-
փական տեսակետը՝ «Genocide»
տերմինի գործածութեան եւ Հա-
յոց ցեղասպանութեան միջազգա-
յին ճանաչման անհրաժեշտու-
թեան մասին: Դեռ աւելին հռետո-
րական ճարտասանութեամբ ու
վերամբարձ ոճով Ռ.Ս.-ին մէկ առ
մէկ յուշում է, որ «Որովհետեւ
աշխարհը այժմ գիտէ, որ Թուրքի-
այի տերիտորիայում, պետական
պաշտօնական որոշմամբ եւ կա-
տարեալ ծրագրաւորմամբ, իր
հազարամեայ բնօրրանից եւ սե-
փական տնից ու տեղից բռնա-
զաղթեցւել են աւելի քան երկու
միլիոն խաղաղ ազգաբնակիչներ
եւ ըստ առկայ ստոյգ տւեալնե-
րի... Այո, այսօր եւս Դեր Ձորեան
աւազուտների ամէն քայլափո-
խում նկատելի են բիւրաւոր նա-
հատակած անշիրիմ մարմիննե-
րի ոսկորները: ...»: Եւ հէնց այս-
պէս յօդաձագիրը, թերեւս, մոռա-
նալով թէ ո՛ւմ են ուղղած իր խօս-
քերը եւ ովքեր են այդ թերթի ըն-
թերցողները, շարունակում է իր
պատմական ակնարկը Մեծ Եղեռ-
նի եւ նրա հետեւանքների մասին,
եւ դիմելով Ռ.Ս.-ին հարցնում.
««Յոյս»-ի խմբագիր Ռոբերթ Սա-
ֆարեան, որտե՞ղ է Թուրքիայի
տարածքում մինչեւ մէկ դար
առաջ ապրող աւելի քան 2 միլի-
ոն աշխատասէր, տքնաջան, օրէն-
քին հպատակ, ստեղծագործ եւ
դարեր շարունակ օսմանեան բռ-
նաճնշումները կրած՝ հայ խաղաղ
բնակչութիւնը, որոնք պէտք է ներ-
կայունս նւագագոյնը դրա եռա-

*պատիկ թիւը կազմէին Թուրքիայի
տերիտորիայում: Ովքե՞ր են օգտ-
ւել եւ տակաւին օգտուում են
նրանց արդար քրտինքով վաս-
տակած գոյքերից»: Այս տողերը
կարդալով ընթերցողին թւում է թէ
որեւէ մէկը, աւելի ճիշտ Ռ.Ս.-ը
հերքել կամ կասկած է յայտնել
Հայոց ցեղասպանութեան եղելու-
թեան վերաբերեալ եւ նրան է
մատնացոյց անում աւազուտների
մէջ մնացած հայ նահատակների
ոսկորները: Եւ այսպէս յօդաձա-
գիրը Ռ.Ս.-ի երեսին շարտելով մի
շարք տեղեկութիւններ հայկական
հարցի եւ հայ-թուրքական յարա-
բերութիւնների վերաբերեալ, իր
յօդաձագն աւարտում է արդէն մեր-
կապարանոց մի յայտարարու-
թեամբ. «...«Հայոց Տարդ»-ը, եր-
բեք աշխարհի լրատւամիջոցների
քաղաքականութեան եւ մշակոյթի
շուկայական առետրամիջոցի չի
վերածուել, այլ գտնուում է մարդկա-
յին արդարութեան ու պատմական
ճշմարտութեան վերականգնման
պայքարի կիզակէտում»:*

Այս բոլորից կարելի է եզրա-
կացնել, որ ըստ երեւոյթին՝ հեղի-
նակին, այսինքն՝ Ռուբէն Սաֆա-
րեանին ընդհանրապէս դուր չի
եկել Ռ.Ս.-ի մօտեցումը այս հար-
ցին, որը թէւ նորութիւն է ոմանց
համար մեր համայնքում, սակայն
Հայաստանում ու ողջ զարգացած
աշխարհում արդէն ծամծուծած թե-
մա է: Այն, որ հայկական հարցը
միշտ էլ օտարների կողմից չա-
րաշահուել է եւ մարդկութիւնը ար-
դիւնքում նոյնիսկ ներկայ գեր-
զարգացած աշխարհում ցեղաս-
պանութիւնների ականատեսն է
լինում, անվիճելի փաստ է: Այդու-
հանդերձ, ըստ երեւոյթին ոմանց
ծեռնտու է գլուխը ձիւնի մէջ խո-
թած մի ժողովուրդ ունենալ, որի՝
պատմութեանն ու մայրենի լեզուին
չտիրապետող երիտասարդը դեռ
զբաղւում է պատերին «Մահ
Թուրքիային» գրելով, առանց
մտածելու թէ ինչո՞ւ, եւ ինտերնե-
տում քւէարկում է յօգուտ «Արա-

րատ» ֆիւմի՝ առանց այն որ այն
դիտած լինի: Իրօք ո՞ւմ է պէտք
իրականութեանը անհաղորդ, հա-
րիրամեայ կարգախօսներին կու-
րաբար հետեւող ժողովուրդը: Ին-
չո՞ւ յարգելի պրն. Ռուբէն Սաֆա-
րեանը մինչեւ վերջ չի հասցրել
Ռ.Ս.-ի յօդաձագն քննադատութիւնը
եւ լիովին անտեսել է նրա վերջին,
ըստ իս՝ եզրափակիչ սիւնակը, ուր
անդրադառնալով տիրող միջազ-
գային քաղաքական ու լրատւա-
կան, մակերեսային աղմուկ-աղա-
ղակին, որից գերծ չի մնում նաեւ
իրանահայ համայնքը, ընթերցողի
ուշադրութիւնը դարձնում է իրա-
կան պատկերի կողմը, Թուրքիա-
յում տիրող մթնոլորտի եւ հայ-
թուրքական յարաբերութիւնների
ներկայ իրավիճակի կողմը,
Հրանդ Դինքի գաղափարների
կողմը: Ինչո՞ւ է յօդաձագիրն այս
մասին լռել: Արդեօք հէնց այս
«մեղքով»՝ իրականութեան բարձ-
րածայն արտայայտման պատճա-
ռով չէ՞ որ Ռոբերթ Սաֆարեանը
ամենայն խստութեամբ դատա-
պարտուում է:

Եւ ի վերջոյ, նախ՝ պրն. Ռուբէն
Սաֆարեան, երանի թէ ցեղասպա-
նութեան վերաբերեալ այդ տեղե-
կութիւնները պարսկերէն լեզուով
տպել տայիք պարսիկ անտեղեակ
ընթերցողների համար, իսկ հային
ասէիք թէ նոր խօսք ի՞նչ ունէք
ասելու, չէ՞ որ ժամանակները
փոխելով ոչ միայն կարելի է, այլ
պարտադիր է վերագնահատել
իրավիճակը եւ նոր ստրատեգիա
եւ նոր եղանակներ առաջարկել
նոյնիսկ հարիւր տարւայ վաղե-
մութիւն ունեցող հարցը լուծելու
համար:

Ապա՝ առանց մի պահ անգամ
անտեսելու քարոզչութեան, աշ-
խարհի հասարակական կարծիքի
եւ Յեղասպանութեան ճանաչման
կարեւորութիւնը, այնուամենայ-
նիւ պէտք է ընդունել, որ դրանով
տարւելը եւ դա գերագոյն նպա-
տակ դարձնելը սխալից սխալ է եւ
յատկապէս մենք սփիւռքահայերս

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ. ՄԵԾԱՍ

ունենք առաջնային՝ աւելի կարելոր նպատակներ՝ հայապահպանում, սփիւռք-հայրենիք կապերի ամրապնդում, հայրենի երկրի հզորացում եւ իրաւական իրական եղանակներով արդարութեան վերականգնում, քանզի եթէ չլինեն ազգային ինքնագիտակցութեամբ, զարգացած հայեր եւ հարուստ տնտեսութեամբ հզոր Հայաստան, էլ ո՞վ է հետապնդելու հայոց ցեղասպանութեան հարցը, եւ ո՞ւմ են պետք, որ Օբաման թէ Սարկոզին վերջապէս կօզտագործեն «Genocide» տերմինը թէ՞ ոչ:

Յարգելի պարոն Ռուբէն Սաֆարեան, թոյլ տւէք յիշեցնել, որ պատմութեան ուսումնասիրութիւնը միայն հերոսութիւններով հպարտանալու կամ կորուստների համար ողբալու նպատակով չի կատարուում, այլ նաեւ մեր հզոր ու թոյլ կողմերի յայտնաբերման համար: Ուստի եթէ ցեղասպանութիւն է կատարել, պետք է պատճառները՝ ոչ միայն թուրքերի գազանութեան ու չարութեան մէջ որոնել, այլեւ գտնել մեր թերացումները, թոյլ ու անպաշտպան լինելու եւ զոհի դերում յայտնելու պատճառները, որով թուրքերը յաջողեցին իրագործել իրենց ծրագիրը, եթէ ոչ՝ հարիւր տարւայ հեռաւորութիւնից արդէն բոլորս էլ գիտենք թէ՛ երբ եւ ինչպէս է պատահել, եւ այդ բոլորը կրկնելը գործնականում մեզ ոչնչով չի օգնելու:

Թող ոչ հեռու ապագայում գայ այն օրը, որ մենք այս կրաւորական դերից դուրս գանք, եւ փոխարէն ազգովի պայքարենք ու սպասենք, որ Օբամաները «Genocide» տերմինը օգտագործեն, լինենք այնքան հզոր ու հարուստ, որ նրանց թելադրենք մեր կամքը, եւ արդարութիւն պահանջենք:

Ադրբեջանը բաց չի թողնում ոչ մի ամբիոն՝ միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրելու այն «վտանգի» վրայ, որը, ըստ նրա, ներկայացնում է Հայաստանը համաշխարհային քաղաքակրթութեան համար:

Նման ամբիոններից մէկն էլ դարձել է Մարտին Սեւուլում անցկացւած միջուկային անվտանգութեան գազաթնաժողովը, որտեղ Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիեւը մտահոգութիւն է յայտնել Հայաստանում Մեծամորի ԱԷԿ-ի գործունէութեան կապակցութեամբ: «Մեծամորի ԱԷԿ-ը ողջ տարածաշրջանի եւ մօտ հարեւանների համար աղէտի պոտենցիալ աղբիւր է: Ադրբեջանը ծայրաստիճան անհանգստացած է Հայաստանի ատոմային էլեկտրակայանի գործունէութեամբ, որը գործարկւել է 1976 թ. եւ այս պահին հնացել է»,- ասել է նա: Ատոմային էներգիայի միջազգային գործակալութեան կանոնադրութեան 4-րդ կէտի համաձայն՝ բոլոր պետութիւններն ատոմային էներ-

գետիկայի ոլորտում գիտական նւաճումներն օգտագործելու իրաւունք ունեն: Իսկ այս ոլորտում որոշակի արդիւնքների հասած երկրները պարտաւոր են օգնել այն պետութիւններին, որոնք ձգտում են զարգացնել այդ ոլորտը: Կարելի՞ է արդեօք ուղորդել խտրական մեթոդներով այնպէս, որպէսզի միայն մի քանի երկրներ օգտուին գիտական նւաճումների բարիքներից, իսկ միւսները նրանցից կախւած լինէին: Այս հարցը, մասնաւորապէս, տեղին է Հայաստանի համար, որն այլընտրանքային էներգակիրներ չունի, եւ միեւնոյն ժամանակ շրջափակման մէջ է: Վերջերս ԱՄՆ էներգետիկայի նախարարութեան վերականգնուող էներգիայի ազգային կենտրոնի գլխաւոր խորհրդական Գնէլ Դուրեանը յայտարարել է, որ Մեծամորի ատոմակայանի ապամոնտաժումը էներգետիկ ճգնաժամի կը բերի, որը հնարաւոր է կանխել միայն ջրածին օգտագործելու դէպքում: Հնարաւոր է արդեօք այսօր՝ միջազգային մակար-



ՆՈՐԻ ՆՈՐ ԱՏՈՄԱԿԱՅԱՐՆ, ԹԷ՛ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Արիս Դազինեան



դակով էներգետիկ ոլորտում լուրջ խնդիրների առկայութեան պարագայում լուծել մի երկրի խնդիրները՝ միայն ջրածին օգտագործելու միջոցով: Ապրիլի 29-30-ը ՀՀ արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի Թեհրան կատարած պաշտօնական այցի ժամանակ այդ հարցը Iran News գործակալութեանը մեկնաբանել է «Նոր հայեցակարգ» ռազմավարական հետազոտութիւնների իրանական կենտրոնի տնօրէն Միրզասեմ Մոմենին: «Զգիտեմ, թէ որքանով է պարոն Դուրեանն ուսումնասիրել Հայաստանի հնարաւորութիւնները,- ասել է Մոմենին: - Հայաստանն իր չափսերով փոքր երկիր է, զրկած նաւթի եւ գազի բնական պաշարներից: Այս երկրի սահմանները երկու կողմից փակ են, եւ Կասպից ծովի նաւթը նրան,

բնականաբար, հասանելի չէ: Անձամբ ես կասկածում եմ, թէ կը կարողանա՞յ արդեօք Հայաստանը, օգտագործելով միայն ջրածին, ապահովել իր բոլոր էներգետիկ կարիքները»: Իրանցի փորձագէտն ընդգծել է, որ Հայաստանը ատոմային էներգիայի արտադրութեան, օգտագործման եւ արտահանման մեծ փորձ ունի: «Կարծում եմ՝ ներկայումս միանգամայն հնարաւոր է արդիականացնել Մեծամորի ատոմակայանը, կամ էլ միջազգային ֆինանսական աջակցութեան դէպքում կառուցել նոր, ժամանակակից ԱԷԿ: Եթէ Հայաստանին չյաջողւի էներգետիկ անկախութեան հասնել, այն միշտ կախած կը լինի միւս պետութիւններից եւ արդիւնքում նրանց գերին կը դառնայ», - նշել է Մոմենին: Հայկական նոր

ԱԷԿ կառուցելու հարցում դեռեւս այն կարծիքն է շրջանառւում, որ Հայաստանում նոր ատոմակայան կարելի է կառուցել կոմպլեքստար սկզբունքով՝ վառելիքը ստանալ Ռուսաստանից, տեխնոլոգիաները՝ Ֆրանսիայից, իսկ ֆինանսները՝ ԱՄՆ-ից: Այս կապակցութեամբ իրանցի փորձագէտը մատնանշել է հնարաւոր խոչընդոտները. «Բացի էներգետիկ հարցերից, ԱՄՆ-ը, Եւրոպան եւ Ռուսաստանը տարածայնութիւններ ունեն նաեւ այլ ոլորտներում: Ինչպէ՞ս նրանք կարող են համագործակցել մի նախագծում եւ հասնել դրական արդիւնքների: Լաւագոյն դէպքում արդիւնքը կը լինի նոյնը, ինչ Բուշեհրում իրանական ատոմակայանինը: Թղթի վրայ այս նախագիծը գրաւիչ է թւում, սակայն տրամաբանութեան եւ իրատեսութեան առումով, այն, ինչպէս ապացուցում է պատմական փորձը, ըստ էութեան, անիրականանալի է»: Մոմենին միաժամանակ նշել է, որ Իրանը պատրաստ է հումանիտար նպատակներով փոխանցել ատոմային ոլորտի իր գիտելիքները եւ փորձը միւս պետութիւններին: «Նախագահ Ահմադինեժադը բազմիցս ասել է, որ Իրանը ատոմային էներգիայի ոլորտում պատրաստ է աջակցելու իր բոլոր հարեւաններին, բնականաբար՝ նաեւ Հայաստանին՝ Իրանի ռազմավարական կարեւորագոյն գործընկերոջը տարածաշրջանում», - ամփոփել է Մոմենին:

Աղբիւր՝
www.armenianow.com

ՔԱՂՅՐ ԵՐԱԶԱՆՔՆ ԸՆԴԴԷՆ ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ ԻՐԱՆԱՀԱՅ ԲԱՆԱՍՏ

Վահէ Արմէնը ծնել է 1960 թականին Իրանի Մաշհադ քաղաքում, ուր ստացել է իր նախնական կրթութիւնը: Միջնակարգն աւարտելուց յետոյ մեկնել է Լոնդոն, որպէսզի իր կրթութիւնը շարունակի հասարակագիտութեան մասնագիտում: Սակայն, երեւի, բախտն այնպէս էր վիճակել, որ նա բանաստեղծ դառնայ: Դեռ երիտասարդ տարիքում, Մաշհադ քաղաքում տեղի ունեցած ատուովթարի հետեւանքով նա կորցնում է քայլելու կարողութիւնը, եւ դա պատճառ է դառնում, որ իր ողջ կարողութեամբ նիւրի գրականութեանը: Դրա արդիւնքը մի շարք բանաստեղծութիւնների եւ թարգմանութիւնների ժողովածուներ են: Վահէ Արմէնի բանաստեղծութիւնների վերջին ժողովածուն լոյս է տեսել վերջերս: Գիրքը պարունակում է նրա պարսկերէն բանաստեղծութիւնները: Իսկ ինչո՞ւ պարսկերէն: Հէնց այստեղից էլ սկսեցինք մեր զրոյցը Վահէի հետ:

Ռ. Ս.

-Նորերս լոյս է տեսել բանաստեղծութիւններիդ նոր ժողովածուն՝ «Երբ անձրեւի՝ կը գնանք» պարսկերէնով: Ինչպէ՞ս եղաւ, որ սկսեցիր պարսկերէնով գրել:

-Հայերէնով գրած բանաստեղծութիւններիս առաջին եւ երկրորդ ժողովածուները՝ «Դէպի սկիզբ»-ն ու «Ծիչ»-ը թեհրանում եւ Երեւանում լոյս տեսնելուց յետոյ, զգացի, որ իմ ներսում կուտակւած եւ կուտակուող մտքերն ու զգացմունքները չեն տեղաւորուում տողերիս մէջ, չեն կարողանում դրանք լիովին դրսեւորել եւ թղթին յանձնել: Փորձեցի բանաստեղծութիւններ գրել պարսկերէն լեզուով: Այդպէս, սկսեցի եւ շարունակեցի գրել ՆՈՐ ՊՈՌԹՎՈՒՄՆԵՐՈՎ: Պարսկերէնով գրւած բանաստեղծութիւններիս առաջին ժողովածուն լոյս տեսաւ 2005 թականին, որը կրում էր «Թեւերը թողեց բանաստեղծութեանս կողքին ու հեռացաւ» ընդհանուր խորագիրը: Երկրորդը՝ «Կռունկների թռիչքից յետոյ»-ն էր, որը լոյս տեսաւ 2009-ին, իսկ վերջինն էլ «Երբ անձրեւի՝ կը գնանք»-ն է, որի մա-



սին արդէն խօսեցինք:

Գիտես, հայերէնով գրելիս՝ միշտ մտածում էի թէ ԻՆՉՊԷՍ գրեմ, իսկ պարսկերէնով գրելիս՝ մտածում եմ թէ ԻՆՉ գրեմ: Բանաստեղծն, ըստ իս, պէտք է կատարելապէս տիրապետի ա՛յն լեզւին, որով գրում է, որպէսզի երբեք ԻՆՉՊԷՍ գրելու մտահոգութիւն չունենայ, այլ ունենայ միայն ԻՆՉ գրելու ՅԱՃԵԼԻ՝ ՏԻԱՅՏԱՆՔ...

-Արդեօք գրելու լեզուն փոխելը հանգի՞ստ եղաւ: Զմտածեցի՞ր,

ասեմք, թէ՛ ինչո՞ւ փոխեմ իմ մայրենի լեզուն:

-Լեզուն փոխելը հէնց այդ մասին մտածելուս արդիւնքն էր: ԵՍ ԱՄԵՅԻ՝ ԻՂՋԵՐ ՈՒՆԵՄ ԾՈՎ ԵՐԱԶՈՂ ԶԿՆԻԿԻ ՊԷՍ... ու պէտք է ձայնս հասցնեմ աշխարհին՝ հայ ՄԱՐԴՈՒ ձայնը: Լեզուն միջոց է: Ես մեղաւոր չեմ, որ հանգամանքների բերումով ծնւել եմ Հայրենիքից դուրս՝ Իրանի Մաշհադ քաղաքում, որտեղ երկար տարիներ շփուել ու յարաբերւել եմ հազարաւոր պարսիկի եւ ընդամենը յի-

ԴԱՌՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՂԾ ՎԱՅԷ ԱՐՄԵՆԻ ՀԵՏ

սուն-վաթսուն հայի հետ. Յիսուն-վաթսուն հայ ասելով, նկատի ունենմ տասը-տասներկու ընկերներիս ու նրանց ընտանիքներին: Ինչեւէ. Լեզուն փոխելը, սիրելի Ռոբերթ, չգիտեմ համգիստ ու հեշտ էր թէ դժուար, բայց հաստատ գիտեմ, որ ինձ համար, թէեւ ցաւալի, սակայն ճակատագրական էր, ինչպէս ցաւալի, միեւնոյն ժամանակ, ճակատագրական եմ եղել մեր պատմութեան էջերից շատերը: Գիտես, ՍԱ էլ այն ցաւերից մէկն է, որոնք ինձ կրկնակի ոգեւորութիւն ու եռանդ են ներշնչում՝ ինձ եւ իմ անձը մոռանալու, բանաստեղծ դառնալու եւ ստեղծագործելու: Կեանքը, ասել է անմահ Տէրեանը, նշանակում է ստեղծագործութիւն. Ուր չկայ ստեղծագործութիւն, չկայ եւ կեանք:

- Հիմա հայերէն էլ ե՞ս գրում:

-Ո՛չ: Հիմա միայն երբեմն հայերէնից թարգմանութիւններ են կատարում: Հեղինակ են թարգմանութիւնների վեց ժողովածուների, որոնցից չորսը Հայաստանի ժամանակակից բանաստեղծների հատընտիր գործերն են՝ թարգմանած պարսկերէնի:

- Եւ այդ գրքերը որո՞նք են:

Առաջինը լոյս տեսաւ 2005-ին, որի խորագիրն է «Դռանս բանալին արեւի լոյսն է» (պրսկ.՝ «Քելիդէ Դարամ Նուրէ Խորշիդ Ասթ») . դա ժամանակակից վեց հայ բանաստեղծների գործերի նմուշների թարգմանութիւնն էր պարսկերէնի: Յետոյ՝ Յովհաննէս Գրիգորեանի բանաստեղծութիւն-



ների հատընտիր ժողովածուն էր՝ պարսկերէնի թարգմանած՝ «Բոլորովին ուրիշ աշուն» (պրսկ.՝ «Փայիզի Քամելան Սոթֆաւեթ»)

խորագրով, որը լոյս տեսաւ 2009-ին. Յաջորդը՝ 2010-ին լոյս տեսած Էդարդ Հախվերդեանի «Ծիրանի հիւթն ու սեւ եռանկիւնին» (պրսկ.՝



ՎԱՏԷԻ ՊԱՏԵՂՈՒԹՅԱՆ

Վահե Արմենի անձնական կայքում կայ մի բաժին, որը կոչվում է «Քաֆե թերաս», ուր նա զետեղում է, առօրեայ զանազան գրառումներ, երբեմն դրանց կցելով լուսանկարներ: Ահա լուսանկարներից մեկը, որը այն դիտանկարն է, որտեղից բանաստեղծը յաճախ դիտում է փողոցը: Այս պատկերը Վահեին յիշեցրել է Յովհաննես Գրիգորեանի բանաստեղծություններից մեկը: Վահե Արմենի կայքի հասցեն՝ www.vahearmen.com

«Շահիդ Զարդալու վա Մոսալաստ Սիահ» էր, վերջինն էլ «Չեշմե» հրատարակչության միջոցով լոյս տեսած «Առաջին տողը չեմ գրում» (պրսկ.՝ «Սաթրե Աւալ րա Նեմինե-Լիսամ») ժողովածուն էր, որը հատընտիր ժողովածու է՝ Հայաստանի տասներեք ժամանակակից բանաստեղծների կարճ բանաստեղծությունների:

Թարգմանության դեպքում դժարություններ շատ կան: Գիտես, երբ բանաստեղծություն եմ գրում, ոչ մի բանի մասին չեմ մտածում. Չեմ մտածում, որ տւեալ բանաստեղծությունն արդեօք տպագրութեան իրաւունք կը ստանա՞յ թե՞ ոչ: Կարծանանա՞յ ընթերցողի հաւանութեանը թե՞ չէ: Ինձ այս տողերը գրելու համար կը ծափահարե՞մ, թե՞ կը հայիոյնեմ: Այն ինչ գրել եմ, ԻՄն է եւ անէն ինչից անկախ՝ պէտք է լինի ու մնայ հէնց այնպէս, ինչպէս գրել է Վահէն: Մինչ, թարգմանութեան դեպքում այդպէս չէ, եւ դժարութիւններ շատ կան. Որովհետեւ, նախ՝ պէտք է շատ բանաստեղծութիւններ կարդամ, որպէսզի թարգմանութեան համար ընտրեմ այն գործերը, որոնք սիրում եմ եւ հոգեհարազատ են ինձ: Յետոյ՝ նորից պիտի կարդամ, որպէսզի նորից ընտրեմ այն գործերը, որոնց հետ, գիտեմ, պարսիկ ընթերցողն աւելի հեշտ է կարող կապ հաստատել: Իսկ վերջում էլ կայ մշակոյթի նախարարութեան արտօնութեան խնդիրը: Լաւ, ես ինչո՞ւ թարգմանեմ մի գործ, որը վստահ եմ Մշակոյթի նախարարութիւնը չի ընդունելու եւ տպագրութեան իրաւունք չի ստանալու այդ գործը: Այսպիսի պայմաններում, թարգմանութիւնը չի՛ կարող այնքան էլ հաճելի աշխատանք լինել:

- Այն որ շփման մէջ ես եղել պարսիկ գրական շրջանակների հետ ի՞նչ դեր է ունեցել այս գործի ընթացքում:

-Հէնց այնպէս, որ ասացի՝ ես ծն-



«ԵՐԲ ԱՆԳԵԻ, ԿԸ ԳՆԱՍՔ» ԳՐՔԻՅՆ ՆՄՈՒՇՆԵՐ

ԵՐԲ ԱՆԳՐԵԻԻ, ԿԸ ԳՆԱՍՔ

Բանաստեղծութիւնների ժողովածու

«Ամբուղ» հրատարակչութիւն, Թեհրան, Գարուն 2012

92 էջ, գինը՝ 3000 թուման

Գիրքը կարող էք ձեռք բերել հետևեալ գրախանութներում՝

«Նաշրէ Չեշմէ», «Սարգամինէ Քեթաբ», «Լարեստան», «Քարմամէ» եւ «Ալմաս» գրախանութներում,

«Կենտրոնական», «Էրնէ Սինա», Մաշիդիէի եւ Հաֆթ Հոզի Շահրէ Քեթաբներում:

Տօր ԸԻԸն ԿՏԻ րա ԸԸարԻմ
Ըր ՏԻբ...

Ըր ԸօՏԻ ար ԸՏՏԻ արԻմ օ
ՄԻօ ար ԸօրԻմ
Մն Ըա ԸԻ ՄԻլԻ
ար Ըա ՏԻԻԻԻ

ԸօԸԸ ար ՄԻ ԸանԻ

արԻն րօջԻԻ

Ըր արԻն Մն

ԲավՏԻ ԸԻրան Ըա Տալա ԸօրԸ

ար ԻԻր ՏԻԻԻ ԸԻԸԸ

ար ԲավՏԻ ՄԻն Ըա ԸօրՏԻԸ

ԸՏԻԻԻ ԸԻՏԻ Ըր ՏԻԸ...

ԸօՏԸ ԸարՄ ԸԻրան րա ԸԻնԻ

ԸԻԻ

(ար ՂաՄԻԻԻ ար արԻԻ ԸԻ ԸօՏԻԸԸԸ)

Ըար ար ՄԻ ԸնԻ

ար րօջԻ ԸԻ Ըա արԸԸԸ

Ըր ԸանԻ ար ԸրԸԸ

ԸԻՏԻ Ըր ար ՂաՄանԻ ԸԻ ԸԻԸԸ

արԻն Տօ ար ան Տօ ար ՄԻ րԲԸԸ

ԸԲՏԻ ԸարԻ ԸրԸԸ ար...

(ար ՂաՄԻԻԻ ար արԻԻ ԸԻ ԸօՏԻԸԸԸ)

րասԻԻ

ար արԸԸ

ՄԸԸ Մն

ԸԻօանԻ "ԸԻ ՏԻԸ արՄԻԸ" ՏԻԸ

(ար ՂաՄԻԻԻ ար արԻԻ ԸԻ ԸօՏԻԸԸԸ)

ՄնԻ ԸանԻ

արՄԻԸ

ԸԲԸԸ ՏԻԸ արՄԻԸ արՄԻԸ արՄԻԸ

ԸրՏԸ ՄԸԸ ՏԻԻ

ԸԻ Ըօ րա

Ըր ար ԸաԸՏԻԻԻ ար ԸՏԸԸ արԸԸ արԸԸԸԸ

(ար ՂաՄԻԻԻ ար արԻԻ ԸԻ ԸօՏԻԸԸԸ)

Ըր ար ԸԻԸԸԸ ար Ըալա ԸօրԸ

ԸԻԻԻԻ ՄնԻ արԸԸ

Ըր Ըօ ար ՄԻ ԸնԸԸԸԸ

Մն ԸԻ ԸԻԻԸ

ար ար ԸԻ ԸԸ

ԸԻ ԸնԸԸԸԸԸ արԻ ԸԻԻԸ Մն

Մն ար ՄրԸԸԻ

ԸԻ ար ԸօԸԸԸԸ

ԸԻօանԻ արՏԻԸ...

Ըր արԸօԸԸ արՄօջԻԻ

ԸԻ ար ար ԸԸԸԸԸ

ԸԸԸԸԸ Ըր րօջ ԸԻԸԸ ԸՏԻօԸԸ

ար ԸԻնԸԸԸ Ըր ՏԻԸ

Ըալա

ԸԻրօն ար արԸօԸԸ

ԸԻԸԸ ԸԸԸ ԸՏԸ ԸԻԸԸ ար ար ԸԸԸԸԸ

Ըր րօջ

ար ար ԸԻԸԸ



«Առուները թռչեցին
յետոյ»
Հրտրկչ. «Ահանգժ
Դիզար», 2009թ.,
100 էջ



«Թեւերը թողեց բանաստեղծութեանս կողքին ու հեռացաւ»
Հրտրկչ. «Մեշկի», 2005թ.,
96 էջ



«Դռանս բանալին արելի լոյսն է» Հատընտիր Հայաստանի ժամանակակից բանաստեղծներից,
Հրտրկչ. «Մեշկի»,
2005թ., 96 էջ

ել ու մեծացել են Մաշհադում. Միջնակարգ ուսումն ստացել նոյն քաղաքում, յետոյ էլ ուսումն շարունակելու նպատակով մեկնել են Անգլիա. Մաշհադում միայն հինգ կամ վեց դասարան են հայերէն սովորել, այն էլ պարսիկների կրօնի դասաժամերին, շաբաթական մի 2 ժամ, մենք՝ հայերս գնում էինք Հայոց դպրոցի գրադարանը եւ հայերէն էինք պարապում: Յետոյ՝ տնից դուրս, խանութքանը պարսիկ էր, ընկերներին իննսուն տոկոսը պարսիկներ էին, բոլոր աշխատանքներն ու վարչական գործերը եւ այլն պարսիկների հետ էր կատարում: Իսկ յետոյ էլ, երբ ընկայ այս ասպարէզի մէջ, գրական ընկերներին մեծամասնութիւնը պարսիկ են եղել: Իհարկէ սկզբնական շրջանում, հայ գրական շրջաններ ունեցել են եւ շատերն են ինձ օգնել ու քաջալերել, եւ բարի խորհուրդներ ու ցուցմունքներ տւել:

Նրանցից կարող են յիշել Դոկտ. Մետրոպ Բալայեանին, որ Իսպահանի համալսարանի դասախօս էր: Նրա հետ երկար տարիներ շատ մտերմիկ ու հաճելի զրոյցներ են ունեցել՝ գրականութեան,

արւեստի, հոգեբանութեան ու հասարակական հարցերի շուրջ, եւ շատ բան են սովորել այդ թանկագին մարդուց: Նա եղել է Սորբոնի անւան համալսարանի մանկան հոգեբանական գիտութիւնների թեկնածու եւ իր դասախօսն է եղել ժամ Պիաժէն:

Ռ.Բէնն ու Լէոնիդ Սարւարեանն էլ ինձ շատ են օգնել ու քաջալերել. եւ շատ ուրիշներ, Արսէն Մամեանից սկսած մինչեւ իմ դեռատի, նոյնիսկ մանուկ ընկերներն ու բարեկամները, որոնցից միշտ սովորել ու սովորում են:

Իսկ, ինչ վերաբերում է պարսիկ գրական միջավայրին, կամ ընդհանրապէս գրական շրջանակներին, պէտք է ասեմ երբեք չեմ սիրել մասնակցել այդպիսի շրջանների ու հանդիպումների, որովհետեւ համոզուած եմ, որ արւեստագէտը նման պայմաններում ոչ միայն չի զարգանում, այլեւ տարւելով կողմնակի եւ անհետաքրքիր հարցերով՝ հեռանում է իր բուն նպատակից ու արւեստի հիմնական ճանապարհից:

-Անգլիայում ի՞նչ ես ուսանել:
-Անգլիա գնալուց յետոյ, նախ՝ լե-

զու սովորեցի. Յետոյ՝ սկսեցի ուսումն շարունակել Լոնդոնի համալսարանի հասարակագիտութեան մասնաբաժնում, բայց ցաւօք, կիսատ մնաց, որովհետեւ հայրս հիւանդացաւ ու ես ստիպուած ժամանակաւոր վերադարձայ Իրան: Այդ ժամանակ Մաշհադից տեղափոխուել էինք Թեհրան. յեղափոխութիւնից յետոյ Մաշհադում համարեա հայութիւն չէր մնացել. մտածեցինք տեղափոխուել Թեհրան, որտեղ ապրում էին մեր հարազատները: Ինչեւէ, այդ ամէնից յետոյ, երբ ուզեցի վերադառնալ Անգլիա, թոյլ չտւին երկրից դուրս գնալ: Արդէն Իրանի եւ Իրաքի պատերազմն սկսւել էր: Այդպէս, մնացի այստեղ ու մտածում էի թէ գործերս ինչպէս դասաւորեմ ու ետ գնամ, որ այդ ատկաբար պատահեց... ու երեւի ԲԱՐԻՆ ՅԷՆՅ ԴՐԱ ՄԷՋ ԷՐ, որ մնայի ու չգնայի: Ես ուրախ եմ, որ ինչ-որ պատճառով մնացի ու ընկայ գրական ասպարէզ:

-Ինչպէ՞ս պատահեց այդ աւտովթարը:
-Այն օրերին մտածեցի՝ եթէ առայժմ չեմ կարող երկրից դուրս



«Առաջին տողը չեմ գրում»,
Հրտրկչ. «Չեշմէ»,
2010թ., 156 էջ



«Բոլորովին ուրիշ աշուն», Յովհաննէս Գրիգորեան
Հրտրկչ. «Ամրուդ»
2009թ., 108է էջ



«Ճիշդ»
Հրտրկչ. «Ապոլոն»
Երեւան, 1999թ.
72 էջ

գնալ, ժամանակաւոր մի աշխատանք գտնեն: Հէնց Մաշհադուն գտայ: Աշխատանքս այնպիսին էր, որ շաբաթական 3-4 օր պիտի Մաշհադուն լինէի: Արդէն ամիսներ էր, ինչ աշխատում էի, երբ մի օր երեկոյեան, ընկերներիցս երկուսի հետ գնացինք քաղաքը շրջելու: Հիւրանոցից նոր էինք դուրս եկել, երբ փողոցից անցնելիս, հակառակ կողմից մի մեքենայ ինձ հարածեց: Ընկերներս մի քայլ առաջ էին ինձանից. Ասում էին «Հարածի ծայնից վերադարձանք ու քեզ տեսանք, որ ընկել էիր փողոցի միւս մայրը, որտեղ մի ուրիշ մեքենայ էլ կրկին հարածեց քեզ: Նման բան միայն կինոսկարներում էինք տեսել...»: Ինչեւէ, դէպքից միջեւ երեք օր կոմայի մէջ էի, յետոյ վիրահատեցին ողնաշարս, որպէսզի ողնուղեղս աւելի վնասներ չստանայ: Դա տեսեց շուրջ 7-8 ժամ: Չորս տարի յետոյ, երբ գնացի Անգլիա բուժելու, ասացին՝ վիրահատութիւնը շատ յաջող է եղել: Իսկ թէ ինչո՞ւ չորս տարի յետոյ, ասեմ. Չորս տարի ինձ իրաւունք չտւեցին երկրից դուրս գալ բուժելու համար, ասելով թէ՛ սա

զօրակոչիկ է: «Դէ, ե՛կ Վարդապետ»՝ հաշմանդամ զօրակոչիկ... Այդ չորս տարիների ընթացքում ես անկողնու մէջ էի՝ ուտել, խմել, լողանալ, ամէն ինչ՝ անկողնում: Բայց մոլեգմօրէն գիրք էի կարդում, թէկուզ դրանից առաջ էլ ընթերցասէր եմ եղել ու կարդացող: Վերջապես, յաջողեցի գնալ: Անգլիայում մօտ 7 ամիս մնացի. Թէեւ վիլչերով գնացի ու վիլչերով էլ վերադարձայ, բայց գոնէ ե՛ս զգում էի, թէ ինչ մեծ փոփոխութիւն է կատարւել ինձ հետ եւ ինչքան եմ առաջադիմել: Գնալուց առաջ, չորս տարի անկողնում գամւած էի, եւ առանց մօրս ու քրոջս օգնութեան՝ անգամ աջ ու ձախ շրջել չէի կարողանում: Օրւայ ընթացքում, հինգ վեց րոպէից աւել չէի կարողանում նստել եւ այլն: Ու հէնց այդ օրերին էր, որ ինքս ինձ մտածեցի ու մենախօսեցի՝ Վահէ՛, որոշիր թէ ինչ ես անելու: Ոտքեր չունես գնալու. կամ պէտք է մնաս, կամ թռչե՛րով գնաս... Եւ իրօք, վստահ էի, որ գնալու եմ. Այն օրերին չգիտէի՝ ինչպէս կամ ուր, բայց վստահ էի, որ գնալու եմ...



«Ղեպի սկիզբ»,
Հրտրկչ-
Երեւան, 1994թ.
90 էջ

-Հետաքրքիր է, որովհետեւ մինչեւ հիմա ես չգիտէի, որ աւտոպարի պատճառով ես այս վիճակին մատնւել, նամանաւանդ որ դրա հետեւանքով ես սկսել գրել:
-Ինձ սենտիմենտալ չհամարես, թէեւ խիստ զգայուն մարդ եմ, բայց իրօք, երբեք իմ կեանքն այլ կերպ, առանց պոէզիայի չեմ կարող պատկերացնել. ուզում եմ ասել՝ եթէ օրինակ այսօր ինձ ասեն՝ ոտքերդ քեզ կը վերադարձ-

նենք, իսկ գրքերդ քեզանից կառնենք, ՉԵՄ ԸՆԴՈՒՄԻ. Հաւատաքէք, որ չեն ընդունի:

-Գրաւորներդ մէջ յատուկ յուզականութիւն ու գեղեցկութիւն կայ, զգացմունք կայ, բայց ոչ թէ շատ կրթուտ, կամ սենտիմենտալ, այդպէս չէ՞:

-Ճիշտ ես նկատել. դա պարզապէս գուցէ իրականութեան ու երեւակայութեան պայքարի, կամ գուցէ նրանց սիրաբանութեան արդիւնքն է... իմ գրութիւնների մէջ երբեք չէք տեսնի, որ ես որեւէ արդիւնքի հասած լինեմ, կամ ընթերցողիս ինչ-որ դասեր տւած լինեմ. Իմ տողերում միշտ մի պայքար կայ դառն իրականութեան եւ քաղցր երազանքի միջեւ, որն ընդհանրապէս հանգչում է մոլեգին սիրոյ:

Եւ ասեմ, գուցէ չհաւատաք, բայց երբեմն կեանքիս ամենասիրական դէպքերը հենց ամենաերազային քաղցող դէպքերն են:

-Թէ՛ քո բանաստեղծութիւնները եւ թէ՛ թարգմանութիւններդ, համարեա բոլորը կարճ բանաստեղծութիւններ են: Որտեղի՞ց է գալիս կարճ գրելու այդ հակումը:

-Ինձ յաճախ են հարցնում այդ մասին: Կարճ բանաստեղծութիւնն, ըստ իս, բանաստեղծական ամենադժուար ձեւերից մէկն է, որի կարճ տողերում, բանաստեղծը պիտի կարողանայ ամփոփել իր մտքերն ու զգացմունքները: Դրա համար էլ այն շա՛տ, շա՛տ են սիրում. միշտ էլ սիրել են հնարաւորին չափ միտքս կարճ տողերով արտայայտել եւ փոխանցել ընթերցողին: Բայց, ամենակարեւորն այն է, որ բանաստեղծութիւն գրելիս, երբեք չեն մտածում եւ չեն որոշում, որ տւեալ բանաստեղծութիւնը կարճ լինի թէ երկար, յանգաւոր լինի թէ անյանգ, սեւ լինի թէ սպիտակ: ՈՐՈՇՈՂԸ, ՀԷՆՅ ԻՆՔԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՍ Է: Նա է այդ ամենը որո-

շում ու թելադրում ինձ:

-Քո յարաբերութիւնը, կապը այստեղի հայկական համայնքի հետ ինչպէ՞ս է:

-Եթէ գրական շրջանակներին ու գրողներին նկատի ունես, համարեա ոչ մի կապի մէջ չեն նրանց հետ. Շատ քիչ, այն էլ երբեմն ընկերական հանդիպումներ են ունենում որոշների հետ, Նորվանի, Ազատ Մաթեանի, Անդրանիկ Սիմոնեանի եւ Անդրանիկ Խեչումեանի, որոնց հանդիպելիս մեր գրոյցն ընդհանրապէս արւեստի մասին է լինում: Այսքանը:

-Հայաստանի գրողների հետ որեւէ շփում ունե՞ս:

-Յովհաննէս Գրիգորեանի գիրքը թարգմանելիս, համարեա շաքաթական երկու օր կապւում եւ գրուցում էի նրա հետ. Չէ որ այդ օրերին այն բանաստեղծի գործերն էի թարգմանում, որը դեռ պատանեկութեան տարիներից իմ պաշտելի բանաստեղծն էր եղել. Մտածում էի՝ հիմա եթէ բախտ է վիճակւել, որ թարգմանեմ նրա գործերը, եւ ինքն էլ կենդանի է, ուրեմն ինչո՞ւ առիթը չօգտագործեմ ու նրա հետ չկապւեմ: Այդպէս, մեր այդ յաճախակի կապերը այնպիսի մտերմութիւն առաջացրեց մեր միջեւ, որի հետեւանքով յաջողեցի շատ հեշտ ու հանգիստ թարգմանել իմ սիրելի բանաստեղծի գործերը: Նոյնը եղել է Էդւարդ Հախալերդեանի բանաստեղծութիւնները թարգմանելիս: Այսօր, նրա հետ էլ շատ մտերիմ եմ. Նա աւագ եղբօր պէս ինձ շատ բաներ է սովորեցրել: Էջմիածնում կան բանաստեղծներ, նկարիչներ, գրողներ ու դերասաններ, որոնց թէւ չեն հանդիպել, բայց արդէն մտերիմներ ենք:

-Հայաստան գնացե՞լ ես:

-Ցաւօք սրտի, ո՛չ:

-Պարսկական գրական միջավայրի հետ կապդ ինչպէ՞ս է, նոր գրականութեան հետ ինչպէ՞ս:

-Իմ կապը, թէ՛ պարսկական եւ թէ՛ աշխարհի գրականութեան հետ միայն գրքերի եւ գրական կայքերի միջոցով եմ պահում:

Ընդհանրապէս տնից շատ դուրս չեմ գալիս, թէւ շատ եմ հրաւիրւում դասախօսութիւնների կամ գրական հանդիպումների, բայց հենց այնպէս, որ ասացի՝ չեմ գնում ու չեմ մասնակցում: Այն կապերն ու յարաբերութիւնները, որոնք ինձ պէտք են ու ինձ բաւարարում են, արդէն գրքերի ու ինտերնետի միջոցով ստացւում է: Ընթերցողներիս, գրաքննադատների եւ գրողների հետ այս միջոցով կապի մէջ եմ:

- Ընդհանուր առմամբ ի՞նչ գրողներից ես ազդւել:

-Երեւի, աւելի շատ արձակագիրներից ու արձակ գործերից եմ ազդւում, քան ասենք՝ ինչ-որ բանաստեղծից կամ նրա գործերից: օրինակ՝ Միլան Կոնդերան, Էռիկ Էմանուէլ Շմիտը, լատինամերիկացի Ֆոնթանոն ու Բորխեսը: Նրանց գործերը կարդալով աւելի եմ ներշնչւում քան, ասենք, բանաստեղծութիւններ կարդալիս:

-Վերջին խօսք:

-Շատ հաճելի էր: Շատ չասւած խօսքեր ասացի, ու շնորհակալ եմ:

ԱՐԱ ՕՇԱԿԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔԸ»

2010 թվականին լոյս է տեսել արեւմտահայ անւանի գրող ու մտաւորական հանգուցեալ Վահէ Օշականի որդու՝ Արա Օշականի լուսանկարների գիրքը: Գրքում ներառւած են Վահէ Օշականի գրութիւնները, որոնք լրացնում են Հայաստանի զանազան մարզերում լուսանկարւած պատկերները: Գիրքը հրատարակւել է «Փաւլոհատու բուքս» հրատարակչութեան միջոցով:

Արա Օշականը ապրում է ԱՄՆ-ի Գլենդէլում: Գիրքը մի անձնական ուղեւորութիւն է Հայաստանի եւ Ղարաբաղի ողջ տարածքում: Դա այսօրւայ



Հայաստանի անցումային ինքնութեան մի գրական-պատկերային մեկնաբանութիւն է:







«Հայրենիք» գրքի Նախաբանից.

«Մի ազգի ճշմարտությունը պիտի որոնել նրա մշակոյթի, պատմութեան եւ երկրի միջեւ խիստ յարա-

բերութեան մէջ. նրա տեսանելի եւ անտեսանելի կեանքերի յարաբերութիւնում: Մենք, հայր ու որդի, գրող եւ լուսանկարիչ, եկել ենք Ղարաբաղ, որոնելու այս ճշմարտութիւնը: Ելել ենք փորձելու

հասկանալ եւ լոյս սփռել այսպիսի պատմութիւն-երկիր-մարդ-հոգի կապակցութեան վրայ»:

Վահէ Օշական

ՔԱՆԴԻԷԼ Է ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԶՆԱՅԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՆ «ՓԱԿ ՇՈՒԿԱՅ»-Ն ԿՈՐՅՐԵԼ Է ԻՐ ԿԱՄԱՐՆԵՐԻՉ ՄԻ ՔԱՆԻՍԸ

Սիրանոյշ Գեւորգեան



Երեւանի յայտնի «Փակ շուկայ»-ն կրկին յայտնուեց հասարակութեան ուշադրութեան կենտրոնում, երբ յայտնի դարձաւ, որ այնտեղ ծանր տեխնիկան քանդել է պետութեան կողմից որպէս պատմամշակութային կառոյց ճանաչուած շէնքի տանիքի մի քանի կամարները: Շուկայի ճակատագրով մտահոգւող ակտիւիստները սա «վանդալիզմ» եւ «անօրինակացում» որակեցին:

Քաղաքացիների ահազանգերից, Ֆէյսբուքում եւ առացանց լրատւամիջոցներում կամարների փլուզումը հաւաստող լուսանկարների եւ տեսանիւթի տարածումից եւ մշակոյթի նախարարութեան ներկայացուցչի միջամտութիւնից յետոյ գիշերւայ քօղի տակ կատարուող շինարարական աշխատանքները դադարեցւեցին: Շուկայի սեփականատէրը՝ գործարար պատգամաւոր Սամէլ Ալեքսանեանը, որին պատկանում է նաեւ «Երեւան սիթի» սուպերմարկետների ցանցը, զերծ է մնում մեկնաբանութիւններից: Երբ յայտնի

դարձաւ, որ Ալեքսանեանն է գնել 50-ականների սկզբին կառուցուած շուկան, շատերը մտավախութիւն յայտնեցին, որ նա պատրաստուում է շուկայի տեղում մեծ «Երեւան սիթի» կառուցել, սակայն Ալեքսանեանը մշտապէս հերքել է այդ տեղեկութիւնները՝ ասելով, որ այնտեղ միայն վերանորոգման աշխատանքներ են կատարուում, ինչպէս նաեւ ստորգետնեայ աւտոկանգառ է կառուցուում: «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ Ստեօպա Սաֆարեանը, որը շուկայի դիմաց երկուշաբթի ստորագրահաւաք էր կազմակերպել, Ֆէյսբուքի իր էջում գրել է. «Պահանջւում է քրեական գործ յարուցել վանդալիզմ կատարողների դէմ, ինչպէս նաեւ պատկան մարմինների հետ միջոցներ ձեռնարկել շուկայի շէնքն իր նախկին տեսքին բերելու համար»: Խնդրին անդրադարձել է նաեւ Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը, որը Ֆէյսբուքի իր էջում գրել է, թէ քաղաքապետարանը շինարարութեան համար թոյլտու-

թիւն չի տրամադրել: «Կատարուածն առնչւում է շինարարական կառուցուածքների փլուզմանը, որոնց ամրացման նպատակով տնտեսվարողի կողմից սեփական նախաձեռնութեամբ ամրացման աշխատանքներ իրականացնելու միջոցներ են ձեռնարկւել՝ վթարային իրավիճակներից եւ փլուզումից խուսափելու համար»,- գրել էր քաղաքապետը: Յետաքրքրական է, որ մի խումբ քաղաքացիներ երկուշաբթի վիճաբանութեան մէջ էին մտել ակտիւիստների հետ՝ պնդելով, որ Ալեքսանեանը բարի գործ է կատարում: «Յայկական ժամանակ» օրաթերթը գրում է, որ իր տեղեկութիւններով՝ «Փակ շուկայ»-ի շինութեան մէջ պէտք է տեղակայւի Երեւանի ամենամեծ «Երեւան սիթի» սուպերմարկետը, որը պէտք է ունենայ չորս յարկ: «Սակայն շուկայի տանիքը չի կարող դիմանալ նման ծանրութեան, այդ իսկ պատճառով տանիքը «չեզոքացւում է»,- գրում է թերթը:

Աղբիւր՝ www.armenianow.com



ՇԱՆՅԲ ԲԱՂՐԱՄԵՆՆԵՆԸ՝ ՖԻԶԻԿԱՅԻ ԴՈԿՏՈՐ


«Յոյս» երկչաբաթերթի ընթերցողը արդեն ծանօթ է Շանթ Բաղրամեանի անունը: Նա մեր թերթի էջերում ներկայացրել է ժամանակակից գրականության աչքառու դեմքերին եւ տպագրել՝ իր պատմածքները: Շանթը մի քանի տարի նախագահում էր «Արարատ»-ի սկաուտական միութիւնը եւ կարելու էր ունեցաւ այդ միութեան աշխատանքների աշխուժացման գործում: Եւ այժմ Շանթը նաեւ ֆիզիկայի դոկտոր է: Անցեալ տարի Օգոստոսին նա պաշտպանեց իր ատենադրոշմը Թեհրանի «Շարիֆ» համալսարանի

ֆիզիկայի դեպարտամենտում: Շանթ Բաղրամեանի թեզը կոչւում էր «Տիեզերագիտական

դիտարկումներ՝ մութ էներգիա եւ ձեւափոխւած ձգողական ուժ»: Դա պատկանում է տիեզերագիտութեան (cosmology) գիտական ոլորտին եւ տպագրել է միջազգային հեղինակաւոր գիտական պարբերաթերթերում: Թեզի աշխատանքները կատարել են «Շարիֆ» համալսարանի Դոկտ. Սոհրաբ Ռահեարի եւ Կանադայի «Պերիմիտեր» ինստիտուտի պրոֆ. Նիայէշ Աֆշորդի վերահսկողութեան ներքոյ:

Շանթի ատենադրոշմն արժանացել է առաջին աստիճանի, իսկ ինքը՝ Շանթը ատարել է որպէս գերազանցիկ շրջանաւարտ: Նա այժմ Կանադայում շարունակում է իր գիտական հետազոտութիւնները:


Դոկտ. Շանթ Բաղրամեանին մաղթում ենք նորանոր յաջողութիւններ եւ ուրախ ենք, որ նա իր գիտական աշխատանքների կողքին շարունակում է հետեւել գրա-



կանութեանը եւ «Յոյս»-ին ուղարկել իր նոր գրութիւնները: Մեր յաջորդ համարում կարդացեք լատիներենով կազմած անունի գրող Ֆոնտեյնի մասին նրա յօդածը:

ՖԵԼԻՍԷ ՎԱՐԻՆԻ ԶՐԱՇԱԼԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ


Շվեյցարացի արևեստագետ Ֆելիսե Վարինին համբավ է վայելում իր այսպես կոչված «անամորֆիկ» ճարտարապետական գծագրութիւնների համար: Նա ճարտարապետական եւ քաղաքային տարածքները, սենեակները, դահլիճները, աստիճանները, շէնքերի արտաքին եւ ներքին պատերը, ներկում է այնպես, որ միայն մի յատուկ հայեցակետից կարելի է տեսնել ամբողջ պատկերը, որը յաճախ մի պարզ երկրաչափական ձև է: Այլ կետերից երևում են միայն խառն «կտրուած» գոյնի կտորներ են: Վարինին հաւատացած է, որ արեստի գործը բաղկացած է այս բոլորից միասին, ճիշտ պատկերից ինչպէս նաեւ «կտրուած» ձևերից: Աւելին՝ նա ասում է, թէ իրեն հետաքրքրում է այն հարցը, թէ ի՞նչ է պատահում, երբ մարդիկ ոչ ճիշտ հայեցակետից են դիտում գործը: Ֆելիսե Վարինին ծնել է 1952 թւականին Լոքարնո քաղաքում եւ ապրում է Փարիզում:





ՄԵԻ ԽՈՈՈՉՆԵՐ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԷ՛ ԵՐԵԿԱՎԱՅՈՒԹԻՒՆ

Արման Տ.Ստեփանեան



Մարդ արարածը միշտ էլ ցանկացել է հասկանալ բնութեան գաղտնիքները: Նրան միշտ էլ հետաքրքրել են իր շրջապատը եւ այդ շրջապատում գոյութիւն ունեցող երեւոյթները: Մարդուն ամենահետաքրքրող երեւոյթներից մէկը տիեզերքն է եղել: Հազարաւոր տարիներ սրանից առաջ գիշերւայ երկինքը մարդու համար եղել է միաժամանակ թէ՛ խորհրդաւոր եւ թէ՛ օգտաւետ: Անապատներում չնուրբելու համար, թէկուզ մինչ այսօր էլ մարդուն օգնութեան է եկել տիեզերքը: Եւ հէնց դրա հա-

մար է, ինչ՝ չնայած գիտութեան տարբեր ծիւղերին, որոնք զարգացել են գրեթէ վերջին քանի հարիւրամեակներում, աստղագիտութեան սկիզբը կարելի է որոնել հազարաւոր տարիներ առաջ: Աստղերը եւ մոլորակները ուսումնասիրելով մարդը կարողացաւ ինչ-որ չափով առաջընթաց արձանագրել տիեզերքը ճանաչելու ուղղութեամբ: Դա առաւել եւս թափ ստացաւ այն ժամանակ, երբ ստեղծեցին հեռադիտակները: Այսպիսով դոյզն չափով բացայայտւեց առեղծւածային տիեզեր-

քի գաղտնիքները: Նոր աստղագիտութեան հիմնադիրներն են՝ Նիկոլաս Կոպերնիկը, Գալիլէն, Այզակ Նիւտոնը եւ շատ ուրիշներ: Աստղերի ուսումնասիրութիւնը շարունակելով, մարդուն հետաքրքրեց եւս մի ուրիշ ու շատ աւելի հիմնական հարց՝ ինչպէ՞ս է ստեղծւել մեր աշխարհը: Դա այն հարցն է, որ մինչ այսօր, գիտութեան մեծ նւաճումներով հանդերձ, մնացել է անպատասխան: Այս հարցն ուսումնասիրելու համար ստեղծեց մէկ այլ մասնագիտութիւն՝ տիեզերագիտութիւն: Այս

այսինքն ընդհանուր յարաբերականության տեսության յայտնագործումից մէկ տարի անց, գերմանացի գիտնական Կարլ Շուարտզշիլդը, Էյնշտեյնի տեսության հիման վրայ յայտնեց թէ՛ յարաբերականության տեսության հաւասարութիւնը վճռելով կարելի է եզրակացնել թէ մեր տիեզերքում գոյութիւն ունեն այնպիսի վայրեր, որոնց ձգողական ուժը այնքան մեծ է, որ ոչինչ, թէկուզ լոյսը, չի կարող այնտեղից դուրս փախչել: Դա ինքնին շատ ցնցող ու նոյնիսկ որոշ չափով սարսափելի յայտնութիւն էր: Դրանից շուրջ մի դար առաջ էլ մի շարք գիտնականներ ասել էին իրենց կարծիքը տիեզերքում շատ ուժեղ ձգողական դաշտով գոյութիւն ունեցող մասսաների մասին, սակայն ժամանակին դա շատ լուրջ չէր ընկալւել, առաւել եւս այն հիմնւած էր եղել հին նիւտոնեան ֆիզիկայի օրէնքների վրայ: Սակայն այս անգամ ամէն ինչ տարբեր էր, քանի որ Էյնշտեյնի տեսութիւնը համարում էր լրիւ եւ անթերի տեսութիւն, որը կարողացել էր բացատրել շատ երեւոյթներ: Իսկ այն փաստը, որ թէկուզ լոյսն էլ չէր կարող փախչել այդ վայրերից, դրանց գտնելը դարձնում էր անհնար: Նրանք անտեսանելի էին: Այս վայրերը կոչւեցին սեւ խոռոչներ (փոսեր): Դրանից երկար ժամանակ անց նրանք համարում էին ընդամենը ինչ-որ ոչ իրական մասսաներ, որը ընդամենը Էյնշտեյնի հաւասարութեան մաթեմատիկական հաշարկումների արդիւնքն էին: Սակայն տարիների ընթացքում աստիճանաբար այն իր կողմը գրաւեց բազմաթիւ գիտնականների ուշադրութիւնը: Շատ ֆիզիկոսներ եւ մաթեմատիկոսներ սկսեցին ուսումնասիրել թէ՛

թէ սեւ խոռոչները իսակապէս գոյութիւն ունենան, ապա ինչպէ՞ս են նրանք առաջանում: Ըստ ամենաընդունւած վարկածի, երբ որեւէ մասսիւ աստղ մօտենում է իր կեանքի աւարտին, եւ նրա ներքին էներգիան, որը պատճառ էր դառնում, որ այն լուսաւորի տիեզերքը, վերջանում է, հենց այդ պահից նրա մասսան սկսում է ինքն իր մէջ խտանալ, եւ այնքան է այս խտացումը շարունակւում, որով, ասես թէ, աստղի ամբողջ մասսան հաւաքւում է մի փոքր կետում, իսկ նրա լոյսը հանգչելով, այն դառնում է անտեսանելի: Այսպիսով այս վերին աստիճանի խիտ մասսան իր շրջապատում ստեղծում է մի աներեւակայելի ձգողական դաշտ, որը կարող է իր կողմը քաշել մօտակայ բոլոր երեւոյթներին: Այս տեսութեան վրայ հիմնւելով, առաջին անգամ 1939 թւականին ամերիկացի մեծ գիտնական Ռոբերտ Օպենհայմերը կարողացաւ տիեզերքում ինչ-որ մեռնող աստղի միջոցով փաստել թէ իսկապէս գոյութիւն ունեն սեւ խոռոչները: Թէ՛ ինչ է պատահում այն իրերի հետ, որոնք ներքաշւում են սեւ խոռոչների մէջ, ոչ ոք չգիտի: Այն տեսութիւնները, որոնցով կարողանում ենք բացատրել տիեզերքը, դա քլամտային մեխանիկան եւ ընդհանուր յարաբերականութիւնն են: Սակայն այս երկու տեսութիւններն էլ, որոնք համարւում են մարդու ամենամեծ գիտական ձեռքբերումները չեն կարողանում բացատրել թէ ինչ է կատարւում սեւ խոռոչներում:

Այդ օրերից մինչ այսօր անցել են երկար տարիներ, սակայն մինչ հիմա էլ դեռ մեր գիտութիւնը այս ամենահետաքրքիր եւ ամենախորհրդաւոր տիեզերական երեւոյթի մասին շատ քիչ բան է պարզել: Սեւ խոռոչները այսօր էլ համարւում են տիեզերագիտութեան հետազօտութեան ամենագրաւիչ բնագաւառներից մէկը:

